

Մամբրէի կաղնին Պէյթ էլ Սալիլի մէջ մինչեւ ժ. Գար (Bar. gr. էջ 246-248):

Այժմ գրենք Մամբրէի կաղնիին կամ բեկնիին ու տեղւոյն եկեղեցիին աւանդութիւնները: Եկեղեցական պատմիչներէն Սողոմէն և Սոկրատ Մամբրէի կաղնիին փոխան իբր պաշտամունքի առարկայ ցոյց կուտան բեկնիին և կը նկարագրեն թէ Ադրիանոսի օրերէն հաստատուած նշանաւոր տօնավաճառին կը զիմէին Պաղեստինցիք, Արաբացիք և Փիւնիկեցիք: Գըրիստոնեաներն ու Հրեաներն ալ կը զիմէին հոն ուխտաւորութեամբ, բայց զերծ չէին կռապաշտական արարքներէ: Հոն կը պատուէին հրեշտակները գինիի ըմպելիներով, հաւերու և անասուններու զօհերով և խնկարկութեամբ: Ոչ ոք ջուր կը քաշէր Աբրահամու ջրհորէն՝ որ մօտն էր բեկնիին, ընդհակառակն զայն պատուելու համար ջրհորին մէջ կը ձգէին կարկանդակ, գրամ կամ խունկ, հոն կը թափէին գինի և անուշահոտութիւններ լուսավարդելով զայն: Բոլոր այս արարքները գալթակղեցուցին Սիւրիացի Եւտրոպիան Մաքսիմիոնոսի այրին և Կոստանդիանոսի զօքանչը որ օր մը, իր հայրենակիցներուն նման ուխտի գնաց բեկնիի տօնին: Իր նշանաւոր փեսան հրամայեց որ քրիստոնէական պաշտամունքի վերածուի այն տեղը՝ որ երկու հարիւր տարի առաջ Ադրիանոս հեթանոսութեան յատկացուցած էր: Այս տեղւոյն վըրայ կանգնուած կուռքերն ու բազինը կործանել տալով՝ Պաղեստինի և Սիւրիոյ եպիսկոպոսներուն յանձնարարեց այս աւելորդապաշտութեանց տեղւոյն վրայ կանգնել հոյակապ եկեղեցի մը: Մինչ այս մինչ այն Մամբրէի կաղնին ըլլալ կարծուած հին ծառը արդէն չորցած էր Կոստանդիանոսի օրով (337-361) և միայն